«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ N 99

«29» 07 2025թ. ք. Գորիս

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Ղեկավարվելով «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Գորիս պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները:

Նախագահ՝ ԱՐԱՐԱՏ ԼԱԼԱԲԵԿՅԱՆ _____
(ստորագրություն)

Քարտուղար՝ ԴԱՎԻԹ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ _____
(ստորագրություն)

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ՏՆՕՐԵՆ

ՀՐԱՄԱՆ N 32 հ

«26» 02 2025թ. ք. Գորիս

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՏՆՕՐԵՆ՝ ԿԱՐԵՆ ԼԱԶԱՐՅԱՆ

(ստորագրություն)

Հաստատված է

«Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի

2025 թ. «[illegible]» [illegible] N 82 հրամանով

1. Գորիսի պետական քոլեջի արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն

Գորիսի պետական քոլեջի արտաքին կապերի և միջազգայնացման քաղաքականությունը նպատակ ունի բարձրացնել կրթության որակը, ամրապնդել համագործակցությունը միջազգային և տեղական կազմակերպությունների, քոլեջների ու գործատուների հետ, ինչպես նաև ապահովել ուսանողների և դասախոսների մասնագիտական զարգացումը: Այս նպատակով քոլեջը՝

1.1. Համագործակցում է տեղական և միջազգային կրթական հաստատությունների հետ՝ մասնագիտական կրթության և փորձի փոխանակման համար:

1.2. Խթանում է տեղական կազմակերպությունների և գործատուների հետ կապերը՝ ուսանողների համար պրակտիկաների, արտաղրական ուսուցման և աշխատանքի հնարավորություններ ստեղծելու նպատակով:

1.3. Ապահովում է կրթական ծրագրերի համապատասխանությունը ազգային և միջազգային չափանիշներին՝ ներառելով ՀՀ կրթության չափորոշիչները և Եվրոպական որակավորման շրջանակը (EQF):

1.4. Աջակցում է օտար լեզուների խորացված ուսուցմանը՝ դասընթացների կազմակերպման և միջազգային կրթական ռեսուրսների հասանելիության միջոցով:

1.5. Մշակում է ուսանողների և դասախոսների տեղական և միջազգային շարժունության (mobility) ծրագրեր՝ փոխանակման, վերապատրաստման և պրակտիկայի կազմակերպման համար:

1.6. Ներգրավում է տեղական և միջազգային դոնոր կազմակերպություններին՝ կրթական ծրագրերի բարելավման և ենթակառուցվածքների զարգացման նպատակով

2. Գորիսի պետական քոլեջի արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող ընթացակարգեր

Քոլեջի միջազգայնացման և արտաքին կապերի ամրապնդման համար ներդրված են հետևյալ ընթացակարգերը՝

2.1. Միջազգային և տեղական կրթական ծրագրերին մասնակցության գործընթաց՝ հայտերի ընդունում, գնահատում և ներկայացում քոլեջի միջազգային կապերի պատասխանատուի միջոցով:

2.2.Փոխանակման ծրագրերի կազմակերպում տեղական և միջազգային քոլեջների ու ուսումնական հաստատությունների հետ՝ ուսանողների և դասախոսների համար

2.3.Գործատուների հետ համագործակցության ամրապնդում ուսանողների մասնագիտական հմտությունների զարգացման համար վերապատրաստման և աշխատանքային հնարավորությունների ստեղծում:

2.4.Գործընկեր հաստատությունների հետ համագործակցության պայմանագրերի կնքում՝ ներառելով ՀՀ բոլեջներ, կրթական հաստատություններ, արտադրական ձեռնարկություններ և միջազգային կազմակերպություններ:

2.5.Տեղական և միջազգային կամուրջների ձևավորում՝ կրթության և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան ուսուցման ծրագրերի մշակում:

2.6.Ուսանողների և դասախոսների պրակտիկայի և վերապատրաստման ապահովում տեղական կազմակերպություններում՝ ոլորտային հմտությունների զարգացման նպատակով:

3.Գորիսի պետական քոլեջի արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող մեխանիզմներ

Գորիսի պետական քոլեջում արտաքին կապերն ու միջազգայնացման գործընթացը ապահովելու համար գործում են հետևյալ մեխանիզմները՝

3.1. Արտաքին կապերի պատասխանատու բաժին՝ որը համակարգում է միջազգային ու տեղական ծրագրերը, հաստատությունների հետ համագործակցությունը և ուսանողների մասնակցությունը:

3.2. Տեղական քոլեջների հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացում՝ մասնագիտական փորձի փոխանակման և ուսանողների համար նոր հնարավորությունների ստեղծման նպատակով:

3.3. Ուսանողների և դասախոսների վերապատրաստման և շարժունության աջակցություն՝ կրթաթոշակների, ճանապարհածախսի փոխհատուցման և ֆինանսավորման այլ մեխանիզմների միջոցով:

3.4. Պրակտիկաների կազմակերպում՝ տեղական ընկերությունների, գործատուների և կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով ուսանողների համար մասնագիտական փորձառության հնարավորություններ ապահովելով:

3.5. Տեղական ձեռնարկությունների և գործատուների ներգրավում կրթական գործընթացին՝ գործատուների կարիքների ուսումնասիրություն և ուսումնական ծրագրերի համապատասխանեցում աշխատաշուկայի պահանջներին:

3.6. Օտար լեզուների և միջազգային դասընթացների հասանելիություն՝ առցանց և օֆֆլայն դասընթացների միջոցով:

3.7. Տեղեկատվական և խորհրդատվական կենտրոն՝ ուսանողների և դասախոսների համար տեղական ու միջազգային կրթական հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման նպատակով:

Այս քաղաքականությունը, ընթացակարգերն ու մեխանիզմները կօգնեն Գորիսի պետական քոլեջին ամրապնդել իր կապերը տեղական և միջազգային գործընկերների հետ, բարձրացնել ուսանողների մրցունակությունը և ապահովել որակյալ կրթություն: